

ԼԵԶՈՒՆ ԵՒ ԱՐԻՒՆԸ

1

Այն, ինչ որ անւանում ենք լեզու՝ միայն բառերով արտայայտւելու միջոց չէ, այլ արտայայտութիւնն է առհասարակ: Զեռքերի եւ մարմնի, երեսի եւ աչքերի շարժումները, եւ յաճախ լռութիւնը եւ անշարժութիւնն իսկ լեզու են:

Լեզուն մեր մարմնական եւ հոգեկան էութեան հետ անբաժան կապւած՝ իմաստների, ձայների եւ խորհրդանշանների վերածւած մի տիեզերք է: Նա անդադար գոյացող, մեռնող եւ վերածնող տարերային ուժ է: Լիճի նման, նրան կերակրում են ստորերկրեայ հոսանքները, եւ արեւի կիզիչ ճառագայթները նրան ենթարկում են շոգիացման եւ այլափոխութեան: Ինչպէս քիմիական բաղադրութիւնները եւ կենսանիւթերը հողերի տակ՝ նա նախատեսնւած է մեր մէջ, գրւած եւ արտասանւած: Լեզուն ներկայ է մեր մարմնի ամեն մի մասում, մեր մկանունքների մէջ, մեր ուղեղի ծալքերում, մեր զգայարանքների թրթռուն լարերի վրայ, մեր բջիջների աճող եւ բազմապատկող կերպրնկալութիւնների խորքում:

Եւ մանաւանդ լեզուն արիւն է:

Իսկ երբ ասում ենք արիւն՝ ասում ենք հող, երկիր:

Ոչ մէկ գրագէտի մօտ լեզուն, միտքը եւ հոգին այնքան կապւած եւ միաձուլւած չեն, ինչքան Գէօտէի մօտ: Շեքսպիրի եւ մանաւանդ Դանտէի համար լեզուն խորհրդանշան է, միջոց, երբեմն նպատակ: Գէօտէի մօտ լեզուն ինքը Գէօտէն է, — երակ-

ների մէջ եռացող արիւնը, չորս եղանակների կշռոյթներով պեղւած հողերը, շրջապատող բլուրները, լեռները, Հայրենիքը:

Բառերը – երբ արիւն են եւ հող – միշտ էլ աւելի խոր են, քան այն, ինչ որ ուզում են արտայայտել: Նրանց արմատները մխրճւած են դարերի հեռուներում: Նրանք գալիս են մութ եւ անբացատրելի շերտաւորումների տակից: Նրանք լւացւած են զգացումների եւ գաղափարների անդադրում յորդող գետերով: Նրանք համադրում են եւ իրենց ուսերի վրայ կրում մեծղի բնանկարներ, վսեմ դէպքեր, ծով զգացումներ, պայծառ եւ խոր իմաստների լոյսեր:

Վիշտ, տանջանք, ողբերգութիւն:

Ու շատ անգամ բառը իր բարձրագոյն արտայայտութեան է հասնում, երբ անկարող դրսեւորւելու, սառչում է շրթունքների ծայրին եւ տառապում: Այդ վայրկեաններին նա չի գտնում ինքը իրեն, որովհետեւ նա չի կարողանում բաժանւել աշխարհի այն ամբողջութիւնից, որի երակներում նա դեռ թաւալ է գալիս:

Ուստի, երբ բառը մեր անհատականութեան մակերեսի վրայից քաղւած թեթեւ զարդ է, եւ յիշողութիւնից յիշողութիւն արձագանգւած ձայն, երբ նա իր խոր իմաստի հետ մարմնով չկապւած եւ իր ներկայից դատարկւած պարզ պայմանական նշան է, նա դիակ է:

2

Հասարակ անունը՝ քերականութեան այդ անկլինաքարը, որ բնորոշում է մի իր կամ որոշ մի առարկայ՝ ինքը իսկ առարկան է կամ իրը: Նրան յատուկ են առարկայի ձեւը, շրջագիծը, տարողութիւնը, կշիռը: Սակայն նա նիւթ է, որ կարող է բազմանալ բնութեան բոլոր շարժական եւ փոփոխուող յատկութիւններով:

Նրա մօտ դրւած մի ածական կարող է ամեն ինչ փոխել:

Ածականը, – երբ անհրաժեշտ է եւ ճշգրիտ, – կոչւած է վերականգնելու տիեզերքի միութեան եւ նրան շրջապատող

մթնոլորտի, երեւոյթների կայունութեան եւ մշտնջենական հոսողութեան հաւասարակշռութիւնը: Այդ հաւասարակշռութիւնը անդադար խափանուած է եւ անդադար վերականգնում, այդպիսով երեւան հանելով զգայական աշխարհի ներկայութիւնը եւ այն բաղակցութիւնները, որոնք մեր առջեւ ի վիճակի են բաց անելու երազի դուռը:

Լեզուն կառուցում է:

Բայց լեզուն կարող է հանդիսանալ նաեւ իբրեւ մերժում եւ կործանման ազդակ: Այդ պարագային մենք տրամաբանում ենք այդպէս. երբ ասում եմ առարկայ կամ անձ, իրականի մէջ ես նրանից հանում եմ նրա բուն իսկութիւնը: Բառը անձը չէ, որ ինձ տալիս է, այլ նրա պատկերը: Անձը՝ առանց մարմնի եւ ոսկորի շօշափելի ներկայութեան: Բառը տալիս է անձի շուքը, նմանութիւնը, չլինելը:

Սակայն լեզուն քանդում է եւ միեւնոյն ժամանակ գոյանում է: Եթէ անձը տարրալուծւում է՝ մնում է իմաստը: Ձեւը փոխարինում է նիւթին:

Ու բառը, չնայած որ դուրս է մնում նիւթից, ինքը իր միջոցներով կեանք է ճարտարապետում: Մահը – չլինելը – մտցնում է կեանքի մէջ եւ կեանքը՝ մահի մէջ: Այս հակադրութիւնից առաջ է գալիս այն բնագանցական տւայտանքը, որ յատուկ է իսկական գրականութեան:

Անկարողութիւն հասնել անձին, անկարողութիւն հասնել մահին:

3

Այդ վանդակ-շրջանում պտոյտ է գալիս արգի բանաստեղծութեան մէկ մասը: Նա ճարտարապետում է անկարողութիւնը: Մահով ուզում է յաղթել կեանքը: Նա հարազատ հողից վեր բարձրացող հիւթերի եւ անդիմադրելի աւելնների ծաղկածլում չէ: Նա մտածին է եւ լոյսի տեղ նա քանդակում է մշուշը եւ մառախուղը:

Բանաստեղծուծիւնը հասարակ իրականութեան մի կտոր չէ, որին կարելի է բանականութեան ուժով վերածել միաւորի, անջատել, նախորոշեալ շրջագծի մէջ գետեղել, այլ իրականութիւն է՝ առնւած իր լիառատ ամբողջութեան եւ հրաշալի շուայութեան մէջ:

Նա ներուժօրէն վերապրած կեանք է, իրականութեան իրականութիւն, որին անկարելի է ո՛ր եւ է բաժանումի ենթարկել՝ առանց նրան մահացու հարւած հասցնելու, առանց նրան փոշու եւ չգոյութեան վերածելու: Նրան կազմող տարրերը միաձոյլ են, անբաժանելի, եւ այդ է անշուշտ պատճառը, որ երբեմն պէտք ունի երկայն դարերի՝ իր ներքին, գաղտնի, խորհրդաւոր տարրերը կարգաւորելու եւ յայտնաբերելու համար:

Եւ ի՛նչքան խորհրդաւոր են լեզւի եւ բանաստեղծութեան փոխյարաբերութիւնները: Պատահում է, օրինակի համար, որ լեզուն հասնում է իր զարգացման, իր ճոխացման գագաթնակէտին եւ դառնում է իսկական բանաստեղծութեան համար անպէտք: Լամարտինից եւ Հիւգոյից յետոյ անկարելի բան էր որ «Միրէիօ»ն գրւէր Փրանսերէնով:

Կամ «Միրէիօ»ն պէտք էր գտնէր իրեն արտայայտելու համար հարազատ մի լեզու եւ կամ երբեք պիտի չգրւէր: Պէտք էր, որ պոէման, առագաստանաւի նման, կտրէր ափին կապող իր թռքերը եւ բաց ծով դուրս գար իր սեփական միջոցներով: Եւ ահա որ մի լեզու – պրովանսալը – որ վեց դարերից ի վեր քնած էր, յանկարծ արթնացաւ, իր թեւերի վրայից թանձր փոշիները վայր առաւ եւ ճախրեց, մինչեւ այդ չտեսնւած ուժով եւ գեղեցկութիւնով:

Փամանակին, պրովանսալը հասել էր իր զարգացման բարձրագոյն աստիճանին, տիրել էր քաղաքակրթական ամբողջ մի շրջանի վրայ, ապա ենթարկւել էր անկման: Բառերը՝ հարուստ, չքեղ, հնչուն՝ ներկայ էին, իսկ լեզուն չկար: Լեզուն տեղափոխւել էր թանգարան: Վեր էր ածւել հաստափոր բառարանի: Կորցրել էր իրականութեան հետ իր կապերը: Ու պէտք էր եղել վեց երկայն դարերի լուութեան, որպէսզի նա զարգանայ, մտերմանայ, գոեհկանայ:

Այդ պատահել էր ճիշտ այն ժամանակ, երբ Հիւզոյի հրաբուխից յետոյ, Ֆրանսերէնը դարձել էր անէծք: Պատկերների եւ բառերի հրավառութիւն եւ հոգեկան անապատ: Մտքի եւ սրտի անորոշութիւն: Բնագանցական թշուառութիւն: Բողբեր, վերլեն, Ռեմբօ:

«Անիծւածների» անկման շրջանը:

Բարդ, տակնուվրայ եղած քերականական ձեւերի ներմուծում եւ մանւածոյ պատկերների եւ այլաբանութիւնների մառախուղ փոխարինելու համար իրական ներշնչման թելադրութիւնները եւ կեանքի ստորերկրեայ հոսանքների հետ կորցրած կապը:

Ֆրանսերէնը մեռնում էր*:

Միստրալի իրական, անմիջական ներշնչումը պէտք ունէր լեզւական զով աղբիւրի վտիտ ջրերին ու դալար դաշտերի գարնանային թարմութեան, որպէսզի ստեղծէր իր հրաշալի պոէման: Ու պրովանսալը, վեց դար մաքրիչ աւազների միջից հոսելուց յետոյ, նորից դուրս ժայթքեց լուսաւոր աղբիւրի նման եւ գուլգուլալով երգեց:

«Միրէիօ»ի արիւնը խառնեց հայրենի հողերին եւ դարձաւ լեզու: Կենդանի, պարզ, հասարակ: Կենդանի լեզուն՝ գիւղացու աղջկայ բոբիկ ոտքեր ունի եւ նրանից քրտինք է հոտում: Այդպիսի լեզուն կոյս է, ամօթխած: Խառն, անտաշ, քարքարոտ եւ հնչուն, ինչպէս մեր Աբովեանի լեզուն:

Ցեղը, եւ նրա բարձրագոյն արտայայտիչը՝ բանաստեղծը, այդ կուսութեան միջոցով է, որ հասնում են եւ կառուցում իրենց վաւերականութիւնը:

Լեզուն արիւն է՝ խառնւած հոգիով պեղւած հողերին:

* Այս տողերը գրւած էին, երբ զարմանալի զուգադիպութեամբ հանդիպեցի Փօլ Վալերիի նոր հրատարակւած մէկ նամակին, որով նա բացատրում էր «Jeune Parque»ի ծնունդը... J'avais fini par me suggérer que j'accomplissais un devoir: que je rendais un culte à quelque chose en perdition... Je confesse que le français me semblait une langue mourante, et que je m'étudiais à la considérer sub specie aeternitatis... (Lettre sur la naissance de la «Jeune Parque», Mercure de France, Janvier).

ՊԱՏԳԱՄ

Եթէ ուրիշ ժողովրդների համար բանաստեղծութիւնը գեղեցկութեան նւաճման բարդ եւ խորիմաստ միջոց է, եթէ նա կոչւած է հարստացնելու արդէն շատ երեւոյթներով պերճացած եւ զւարթացած կեանքը, եթէ նա սնունդ է «քիչերի եւ ընտրեալների» համար եւ նրբաճաշակ պրպտումների առարկայ, հայու համար նա անհրաժեշտ հոգեկան հաց է եւ իր էութիւնը պատճառաբանող եւ արդարացնող աստղակերտ ցոլացում:

Հայ բանաստեղծը չի կարող ստեղծագործել առանց այդ պարագան գիտակցելու:

Մեզ մօտ բանաստեղծութիւնը վիճակ է եւ կոչում: Նա հայ ոգու արմատի արմատն է, հայ արիւնի լոյսը, հայ մտքի մագնիսացումը:

Ուրիշների համար բանաստեղծութիւնը յաճախ խաղ է, փորձ, խելառ սաւառնում: Հայու համար, ինչպէս իր ճարտարապետութեան եւ երաժշտութեան մէջ, նա ոչ միայն տիեզերքի հետ փոխարարբերութիւններ ստեղծելու միջոց է, ոչ միայն իրականութիւնը այլափոխութեան ենթարկող ուժ, այլ մանաւանդ մարդկայինին մարդկայինը վերադարձնող հոգեկանութիւն:

Մեր պատմութեան, մեր տառապանքների, մեր ցաւերի իմաստը կարելի է հասկանալ առանց այդ լուսաբանութեան: Հայը կոչւած է պահելու մարդկային գերագոյն արժէքները եւ, ընդհանուր անկման շրջանին, կեանքը վերալուսաւորելու եւ արդարացնելու այդ արժէքներով:

Հայ գրականութիւնը եւ մանաւանդ հայ բանաստեղծութիւնը կոչւած են ծառայելու այդ խորհրդաւոր եւ ճակատագրական նպատակին:

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

* * *

Մեր ամենամեծ թշնամիները իմաստակներն են եղած: Գէշ պարտիզպանները: Նրանք, որ ուրիշների աչքերն են փոխ առած՝ որովհետեւ չունին սեփական աչք, ուրիշի սիրտը՝ որովհետեւ չունին սեփական սիրտ, ուրիշի խելքը՝ որովհետեւ չունին սեփական խելք:

* * *

Ի՞նչ հանգիստ հանճար է հայ ժողովրդի հանճարը: Հաւասարակշռւած, պարզ, լուսաւոր, ժուժկալ: Համեմատում ենք, քննում, զննում՝ արիւնի ոչ մի հետք, ոչ մի ցնցող նշան, այլ անդորրութիւն, միամտութիւն, յստակ արեւային պարզութիւնը:

* * *

Դարերից ի վեր կեանքի մօտից ենք անցնում: Կիսաքանդ եկեղեցիների շուրջը մատաղ ենք բերում եւ մատաղ ենք դառնում: Հայ ոգին հեռաւոր յիշատակ է, մի տեսակ սրբութիւն, որի հետ մենք խօսում ենք հեռուից, տարին մի քանի անգամ վերակոչում ենք մեքենաբար, տօնի առիթ ենք համարում եւ նորից մտնում ենք մեր ամենօրեայ լինելիութեան խանութը՝ փոքրիկ զգացումներ, փոքրիկ դաղափարներ, Ռուսաստանից եւ Եւրոպայից եկած աժան ապրանքներ ծախելու համար: